

**«ԳԼՈՐԱԼ ՍՈՒՐՎԵՅ»
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ**

Ք.Երևան, Մ.Խորենացու, 201 հեռ 096960769,096960469,096966979,էլ.հասցե globalsurvey@mail.ru

ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 256-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան «ԳԼՈՐԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության Ապրանքագետ-փորձագետի պաշտոնակատար, գնահատող՝ Ա.Գ.Առուստամյանս ծանոթացվել են նույն օրենսգրքով սահմանված փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, այդ թվում հիմնավոր և անաչառ եզրակացություն տալու փորձագետի պարտավորության մասին:

Ապրանքագետ-փորձագետի
պաշտոնակատար, գնահատող՝  Ա.Գ.Առուստամյան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ՝ ՀԱ 1125-337
Ըստ՝ Թիվ 14249368 կատարողական վարույթի
Փորձաքննության տեսակը՝ Ապրանքագիտական փորձաքննություն:
Փորձաքննության հիմքը՝ ՀԿԱԾ Շիրակի մարզային բաժին,
ավագ հարկադիր կատարող արդարադատության
մայր Արմեն Ավետիսյանին 10.12.2025թ. որոշումը
փորձագետ նշանակելու մասին:

Հետազոտությունը սկսվել է՝ 19.12.2025թ.

Հետազոտությունն ավարտվել է՝ 19.01.2026թ.

Փորձագետի եզրակացությունը շարադրված է՝ «06» վեց թերթից, կից համակարգչային լուսանկարչական հավելվածը «01» մեկ թերթից՝ ընդհամենը «09» ինը լուսանկարներով:

Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետների մասին՝

Ապրանքագետ-փորձագետի պաշտոնակատար, գնահատող՝ **Արարատ Դավիթի Առուստամյան** - «ԳԼՈՐԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության ապրանքագիտական փորձաքննությունների բաժնի գնահատող փորձագետի պաշտոնակատար՝ քաղաքացիաիրավական պայմանագրով, բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ, գնահատման գործառույթներ իրականացնելու իրավասությամբ (վկայական ԳԳ-2024-2), «29» տարվա աշխատանքային ստաժով և «01» տարվա մասնագիտական ստաժով:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՊԱՐՁԱՔԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑ(ԵՐ)Ը.

Որքան է կազմում Շիրակի մարզ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարանի շուկայական արժեքը:



ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐՁԱՔԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ(ՔԱՑԱՀԱՅՏՎԱԾ) ՆՅՈՒԹԵՐԸ
ԵՎ ԻՐԵԴԵՆ ԱՊԱՑՈՒԹՅՈՒՆ(ԵՐ)Ը ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏԵԼԻ ՕՐՅԵԿՏ(ՆԵՐ)Ը


Թիվ 14249368 կատարողական վարույթով 10.12.2025թ.-ի փորձագետ նշանակելու մասին որոշմանը, կից փորձաքննությանն է տրամադրվել.

1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը 0232610

- ՀՀ, Շիրակի մարզ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարանի փոստային հասցեի անշարժ գույքը:

ԳՈՐԾԻ ՀԱՄԱՈՈՏ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժին ավագ հարկադիր կատարող արդարադատության մայր  ուսումնասիրելով թիվ  կատարողական վարույթի նյութերը.



Պ Ա Ր Ձ Ե Ց

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17 նոյեմբերի 2025թ. տրված թիվ ՇԴ/3379/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է՝

Դոնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի [redacted] սնանկության գործով կառավարիչ [redacted] ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ [redacted] ընդհանուր համատեղ սեփականություն:

Կատարողական գործողությունների ընթացքում առաջացել է հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 14-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 14249368 կատարողական վարույթով նշանակել փորձագետ, որի կատարումը հանձնարարել «Գլոբալ Սուրվել» դատական փորձագիտական ասոցիացիա ՍՊԸ-ին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

1. ՀՀ տվյալ բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված պահանջների համադրման և համեմատման մեթոդները:
 - Շուկայի համակարգված դիտարկում /մոնիթորինգ/
 - Տվյալ ոլորտի մասնագետների հետ համապատասխան տվյալների ձեռքբերում և վերլուծություն
 - Գնահատման համեմատական, ծախսային և եկամտային մեթոդներ
 - Փորձագետի սեփական տեղեկատվական շտեմարան
 - Ի. Ֆրիդման, Ն. Օրդվեյ. «Եկամտաբեր անշարժ գույքի գնահատում և վերլուծություն»
 - ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
 - ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
 - ՀՀ քրեական օրենսգիրք
 - ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
 - ՀՀ հողային օրենսգիրք:
 - Տեղեկատվական թերթերի և ամսագրերի, համապատասխան ինտերնետային կայքերի ուղղման օգնությամբ:
 - Неверов А.Н., Чалых Т.И. “Товароведение и организация торговли непродовольственными товарами” М., 2003
 - Теория и практика судебной экспертизы №1 (9) 2008г
 - Теория и практика оценки”, С.П. Коростелев, Маросейка, 2009

ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Տվյալ եզրակացությունը կազմված է՝ հաշվի առնելով հետևյալ թույլատրող և սահմանափակող պայմանները)

- Սույն եզրակացության առանձին մասերը չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ամբողջությամբ վերցված:
- Սույն եզրակացությունը հավաստի է միայն նրանում նշված նպատակների համար:
- Սույն եզրակացությունը կարող է օգտագործվել միայն ըստ նշանակության՝ համաձայն դատարանի որոշման:
- Սույն եզրակացության հետևությունները հիմնված են փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

ԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 10-ին «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՑ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության գրասենյակ է մուտքագրվել ՀԿԱԾ Շիրակի մարզային բաժին ավագ հարկադիր կատարող արդարադատության մայր [redacted] 10.12.2025թ. որոշումը փորձագետ նշանակելու մասին:

Համաձայն հարկադիր կատարող Արմեն Ավետիսյանի հետ նախորոք բանավոր համաձայնության՝ փորձագետները 2025թ. դեկտեմբերի 19-ին սահմաններում իրականացրեցին այցելություն ՀՀ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարանի հասցե, որտեղ կատարվել է վերոնշյալ հասցեում գտնվող հետազոտմանն ենթակա օբյեկտի արտաքինից օրգանոլեպտիկ եղանակով զննման և լուսանկարման

աշխատանքները:

Լուսանկարումը իրականացվել է «Samsung» մակնիշի Galaxy Z Fold 4 տիպի, SM-F936U մոդելի, 256 GB հիշողության քարտով, 1812x2176 էկրանի կետայնությամբ, 4MP +10MP մեգապիկսել դիմային և հիմնական 50MP +10MP +12MP մեգապիկսել կետայնությամբ թվային մակրոտեսա-լուսանկարչական խցիկով՝ կիրառելով Timestam p Camera ծրագիրը (տես սույն փորձաքննությանը կից լուսանկարչական հավելվածը):

Փորձագետին առաջադրված հարց(եր)ի վերաբերյալ ուսումնասիրությունները և հետազոտությունները կատարվել են սույն փորձաքննության նախաձեռնողի կողմից փորձագետի հետազոտմանը տրամադրված նյութերում առկա և ուսումնասիրմամբ ձեռք բերված տվյալների հիման վրա՝ կիրառելով տվյալների համեմատման և համադրման մեթոդները:

Փորձագետի հետազոտմանը տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց հետևյալը.

Հետազոտության առարկա անշարժ գույքը՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 հասցեյում գտնվող, 08-001-0094-0001-006-013 կադաստրային ծածկագրով, 95.84 քմ մակերեսով բնակարան է: Բնակարանը գտնվում է բազմաբնակարան բնակելի շենքի 3- րդ հարկում:

Փորձագետի կարծիքով, հետազոտվող անշարժ գույքը իր բնութագրերով համապատասխանում է արդի շուկայական պատկերացումներին:

Հետազոտվող անշարժ գույքի բնութագրական նկարագրությունը բերված է ստորև աղյուսակում.

Անշարժ գույքի հասցեն	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարան
Նպատակային նշանակությունը	Բնակելի
Գործառնական նշանակությունը/տեսակը	Բնակարան
Ընթացիկ օգտագործումը	Բնակարան
Վկայականի համար	0232610
Գրանցված իրավունքի տեսակը	Ընդհանուր սեփականություն
Գրանցված իրավունքի սուբյեկտները	
Տարածագնահատման գոտին	10
Շրջակայքը	Բնակելի գոտի
Կադաստրային ծածկագիր	08-001-0094-0001-006-013
Հարկայնությունը	4
Հարկը	3-րդ
Մակերեսը քմ	95.84
Կառուցման տարեթիվը	1992թ.
Կառուցման նյութը	Երկաթբետոն
Միջհարկային ծածկը	Երկաթբետոն
Միջհարկային բարձրությունը մ	2.70
Արտաքին հարդարումը	Առանց արտաքին հարդարման
Պատշգամբ	Բաց
Մուտքի դուռը	Երկաթե
Ներսի դռները	Փայտե
Պատուհանները	Մետաղապլաստից
Զրամատակարարում	Առկա է
Զրահեռացում (կոյուղի)	Առկա է
Էլեկտրամատակարարում	Առկա է
Գազամատակարարում	Առկա է
Օդորակում	Առկա չէ
Ջեռուցում	Առկա է
Սենյակները	Պատերը՝ ներկված Հատակը՝ լամինատ Առաստաղը՝ ներկված Վիճակը՝ լավ
Միջանցքը	Պատերը՝ ներկված

	Հատակը՝ սալիկապատ Առաստաղը՝ ներկված Վիճակը՝ լավ
Խոհանոցը	Պատերը՝ սալիկապատ և ներկված Հատակը՝ սալիկապատ Առաստաղը՝ ներկված Վիճակը՝ լավ
Սանհանգույցը	Պատերը՝, հատակը՝ սալիկապատ, Առաստաղը՝ կախովի, Վիճակը՝ լավ
Ներքին հարդարման վիճակը	լավ, 4 բալ

Հետազոտվող անշարժ գույքի շենքի տեղադրությունը

Հ ա տ՝ yandex.com/maps/10262/yerevan/?ll=44.498047%2C40.199089&mode=search&sl=44.498054%2C40.199067&text=40.199067%2C44.498054&z=16.41



Կադաստրային քարտեզի հատված գույքի շենքի նշումով

Կադաստրային կոդ	08-001-0094-0001
Մակերես >=:	
Մակերես <=:	
Օգտատրոստ	
Ստործ ժամանակ >=:	
Ստործ ժամանակ <=:	
Գրունդան արդյուն եր [շենք: են կերտ]	
Կադաստրային...	Մակերես
08-001-0094-00...	467.28
Էջ	1 ք.1
Գրունդան / ճանապարհի հատված [շենք]	
Վնուկ	ԿՊՏԵ
Կադաստրային կոդ	08-001-0094-0...
Մակերես	467.28
Ստործ ժամանակ	08-05-2024 17

Շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը և անշարժ գույքի հարկը

© Գյուտնե քառ վարչարանի համայնք	0232610	Փնտրել
© Գյուտնե քառ կադաստրային ծածկագրի		
Հարցման ամսաթիվ		27.02.2026 15:18:30
Անշարժ գույքի հասցեն	Մարզ Երևան, համայնք Գյուտնի, բաղադր Գյուտնի, Ե. Չարիկցի փողոց 17ա շենք, 13 բնակարան	
Անշարժ գույքի տեսակը		Բնակարան
Անշարժ գույքի շահարկման արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (22 դրամ)		12 089 015.00
Անշարժ գույքի հարկը 2024 թ. ի համար (22 դրամ)		3 544.51
Անշարժ գույքի հարկը 2025 թ. ի համար (22 դրամ)		5 316.26
Անշարժ գույքի հարկը 2026 թ. ի համար (22 դրամ)		7 089.02

Գնահատման մեթոդ(ներ)ի ընտրությունը

Հաշվի առնելով, որ գնահատվող գույքի հարակից տածքներում բնակարանների շուկան ակտիվ է և առկա առաջարկի մասին տեղեկատվությունը, համադրելի ու բավարար է, գնահատումը կիրականացվի միայն համեմատական մեթոդի կիրառմամբ:


Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշում համեմատական մեթոդով

Համեմատական մեթոդը հանդիսանում է առավել տարածված և կիրառվող գնահատման մեթոդում, քանի որ այն անմիջապես կապված է նմանատիպ օբյեկտների վաճառքների կամ առաջարկների գների հետ: Այս մեթոդով կիրառման դեպքում արժեքը որոշվում է գնահատվող օբյեկտը նույնական կամ համադրելի (նմանատիպ) օբյեկտների հետ համեմատելով, որոնց համար առկա է գների վերաբերյալ տեղեկատվություն:

Այս գնահատման շրջանակներում, կախված ընտրության հնարավորությունից կողմից www.list.am կայքից ընտրվել են 6 համեմատական առաջարկների տվյալներ որոնք գտնվում են գնահատվող գույքից, ուղիղ գծով 80-300մ հեռավորության վրա: Համեմատվող բնակարանները ունեն նույն գույքային իրավունքներն ու սահմանափակումները, նպատակային և գործառնական նշանակությունը, գոտիականությունը, ընթացիկ օգտագործումը, տրանսպորտային մատչելիությունը, հեռավորությունը հասարակական սպասարկման օբյեկտներից, միջհարկային ծածկով, քակի բարեկարգվածությունը, կոմունալ հագեցվածությունը, շրջակա միջավայրը: Համեմատվող բնակարանների տվյալները տարբերվում են շինության կառուցման նյութով, հարկով, պատշգամբի առկայությամբ, միջհարկային բարձրությամբ, ավտոտնակի առկայությամբ, սանհանգույցների քանակով, և ներքին հարդարման վիճակով: Շուկայական արժեքի վրա ազդող այլ գործոններ չեն բացահայտվել կամ համարվել են քիչ ազդեցություն ունեցող:

Անալոգը	Հրումը	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Մասնավոր կիսակառուցում /շրտիկ >> /	Գինը/արժեքը կատարվել է	Միևնույն	Պատշգամբի վիճակը/առկայություն	Միջհարկային ծածկ	Ավտոտնակի առկայություն	Սանհանգույցի/ավտոկայան	Սանհանգույցի/ավտոկայան
1	list.am/item/22307737	Ե.Չարենցի 21	82	26 392 800	Ե/բ	1	Բաց	2,80	Առկա է	2	5
2	list.am/item/22606815	Տ.Ճարտարապետի 12ա	61	22 622 400	Քարե	4	Բաց	2,60	Առկա չէ	1	4
3	list.am/item/22315650	Ե.Չարենցի փ	78	20 360 160	Ե/բ	4	Փակ	2,70	Առկա չէ	1	4
4	list.am/item/23388806	Տ.Ճարտարապետի 32ա	62	24 507 600	Քարե	3	Բաց	2,90	Առկա է	1	4
5	list.am/item/21713796	Ե.Չարենցի փ 7	105	30 163 200	Ե/բ	2	Փակ	2,80	Առկա է	2	4
6	list.am/item/21676380	Տ.Ճարտարապետի 22ա	125	36 949 920	Ե/բ	2	Բաց	2,80	Առկա է	2	5

Քարտեզի վրա պատկերված են գնահատվող և համեմատվող բնակարանների տեղադրությունները



Ճշգրտման գործակցը հանդիսանում է, գնահատողի կողմից կատարված, շուկայական տեղեկատվության և ՀՀ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված, կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված օրենքով, գործող, կադաստրային գինը ձևավորող, գնագոյացման

գործոնների ազդեցության գործակիցների վերլուծության, մասնագետի կողմից այլ գնահատողների հետ կարծիքների փոխանակման արդյունքում ձևավորված և գնահատողի մասնագիտական փորձառությամբ կուտակվող՝ գիտելիքներով ձևավորված, մեծություն: Սակարկության և վաճառքի պայմանների գեղջը հաշվարկվել է 10%-ի չափով:

Անարկոճ	Հղումը list.am/item-ից	Գույքի գտնվելու վայրը	Մակերեսը /քմ/	Առաջարկի արժեքը /ՀՀ դրամ/	1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (առանց ճշգրտման)	Ըրիմության կատարյալ միավոր հետ կապված ճշգրտում (1.00 - ն/բ.0.95-ում)	Հարկի հետ կապված ճշգրտում (1.00 - 2-4-րդ հարկ, 1.05-ին հարկ)	Պատշաճամբի հետ կապված ճշգրտում (1.00 - բաց պատշաճ, 1.02- փակ պատշաճ)	Միջնարկային բարձրության հետ կապված ճշգրտում (1.00 - մինչև 2.80 մ., 0.95-2.80 և ավել.)	Ավտոտնակի առկայության հետ կապված ճշգրտում (1.00 - առկա չէ, 0.95- առկա է)	Սամանագույնների քանակի հետ կապված ճշգրտում (1.00 - 1 ամիս, 0.97- 2 ամիս, 0.95- 3 ամիս)	Ներքին հարդարման ճշգրտում (1.00 - 4 քալ., 0.95-5 քալ.)	Ճշգրտված 1 քմ արժեքը /ՀՀ դրամ/ (ներառյալ սակարկության -10% գումար)
1	list.am/item/22307737	Ե. Չարենցի 21	82	26 392 800	321 863	1,00	1,05	1,00	1,00	0,95	0,97	0,95	266 270
2	list.am/item/22606815	Տ. Ճարտարապետի 12ա	61	22 622 400	370 859	0,95	1,00	1,00	1,00	1,00	1,00	1,00	317 084
3	list.am/item/22315650	Ե. Չարենցի փ	76	20 360 160	261 028	1,00	1,00	1,02	1,00	1,00	1,00	1,00	239 623
4	list.am/item/23388806	Տ. Ճարտարապետի 32ա	62	24 507 600	395 284	0,95	1,00	1,00	0,95	0,95	1,00	1,00	321 069
5	list.am/item/21713796	Ե. Չարենցի փ 7	105	30 163 200	287 269	1,00	1,00	1,02	1,00	0,95	0,97	1,00	230 861
6	list.am/item/21676380	Տ. Ճարտարապետի 22ա	125	36 949 920	295 599	1,00	1,00	1,00	1,00	0,95	0,97	0,95	221 253
1 քմ համադրված միջին արժեքը													266 027

Գնահատվող բնակարանի 1 քմ-ի համադրված միջին շուկայական արժեքը գնահատման ամսաթվի դրությամբ կկազմի 266 027 ՀՀ դրամ: Իսկ 95.84 քմ մակերեսով բնակարանի շուկայական արժեքը կկազմի 95.84 քմ X 264 027 ՀՀ դրամ = 25 496 027 ՀՀ դրամ՝ ընդունվում է 25 500 000 (քսան հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Այսպիսով, ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարանի հասցեի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0232610 վկայական), հետազոտվող անշարժ գույքի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 19.01.2026թ. դրությամբ, կազմել է՝ 25 500 000 (քսան հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Ապրանքագետ-փորձագետի պաշտոնակատար, գնահատող՝ **Ա. Դ. Առուստամյան**

Այսպիսով, վերլուծելով կատարված հետազոտությունները՝ փորձագետ(ներ)ը եզրահանգեց(ին) հետևյալ հետևություն(ներ)ին.

Հ Ե Տ Ե Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հարց. Որքան է կազմում ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13 բնակարանի շուկայական արժեքը:

Պատասխան. ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Չարենցի 17ա շենք 13, բնակարանի հասցեի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0232610 վկայական), հետազոտվող անշարժ գույքի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 19.01.2026թ. դրությամբ, կազմել է՝ 25 500 000 (քսան հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:


Մանրամասն տես սույն եզրակացության «Ապրանքագիտական հետազոտություն» բաժնում:

Ապրանքագետ-փորձագետի պաշտոնակատար, գնահատող՝ **Ա. Դ. Առուստամյան**

Հետգրություն: Վերը բերված հետևությունները հիմնված են փորձաքննությունը կատարելու մասին որոշմամբ առաջադրված երակներային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դարավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

(Ստորագրություն)

«ԳԼՈՐԱԼ ՍՈՒՐԿԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ
 ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
 ՀԱ 1125-337 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՁԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ՀԱՎԵԼԿԱԾ
 ԸՆԴԱՄԵՆԸ 12 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ



Ապրանքագետ-փորձագետի
 պաշտոնակատար, գնահատող՝

[Handwritten signature]
 Ա. Լուսատամյան

